



9. ԱՂՈՒՆԻԿ ԱՂՋԻԿ

Իրեք ախպեր կըլինն, իրեքի պուճուրը կըլի: Էդ տղեն աշխատանքի-բանի չի էթա. ձիու վրա ման կ'ա: Ախպերտանքը կասեն.

— Խի՞ չես դալի մեր տան բաները անես, բեյթի ման ես դալի: Ասեց.— Ամենևին ձեր տան բանը ընծի պետք չէ, էլ տանը չեմ մնըմ, էսօր էթում եմ:

Գնաց էրկու ընկեր գթավ, ասեց.

— Տղե՛ք, էթանք աշխար ման գանք, էլ դառնալ չկա մեզ: Գնացին, իրեք հատ ձի առան. ամենքին մի հատ, նիւան ու գնացին: Գնացին, ընկան շու-յապան տեղ, ճանփեն կորցըրին. տեհան մի ղորուխի խոտի մեջ մի իզ կէրևա, առան էդ իզը, գնացին:

Գնացին, տեհան մեկ հատ վիշապ ընկել ա, էթում ա. դու մի ասի էդ վիշապի իղն ա: Գնացին, հասան վրշապին:

Վիշապն ետ դառավ, էդ իրեքին խրկեց, էդոնք փախան:

Վիշապը ըդոնց կոխեց մե գաղի մեջ. վիշապը մեծ էր, չկարաց նեքսև մտնել. դռանը դեմ արեց, բերանը բացեց, կաղնեց:

— Տղե՛ք,— ասեցին իրարու,— մեզի կուտի, էլ իլաճ չկա, թվանքը լցեք, տվեք բերնի մեջը:

Տղեքը լցին, դարդը կեցին: Իրեք օր մնացին ըտեղ, շատ սովածացան, ասեցին.

— Վիշուպ ոչ ծուր ա դալի, ոչ բան. դուս գանք, տենանք սատկած ա, թե սաղ ա:

Դուս էկան, տեհան՝ սատկած ա. ձիանը նիլան, ընկան ճանփա, Գնացին, մի ծովի ղրաղ դուս էկան. տեհան ծովի էրեսին գյամին դալիս ա: Գյամչին էկավ, գյամին մոտացրեց, ասեցին.

— Մեզ էլ դիր գյամու մեջ:

— Դու ի՞նչ մարդիկ եք,— ասեց,— էս շուխտան տեղ մնացել եք:

— Պատահել ա, ճանփեն կորցրինք, ընկանք ըստե:

— Ձեզ տեղ կըլլի, ամա ձեր ձիանոց տեղ չըլլի:

Ըղոնք էլ ասեցին.— Ձիանը մեզ պետք չի:

Ձիանը բրախ տվեցին, նստան գյամին, ընկան ճանփա: Յըրթունեն վե կացավ, իրեք գշեր ծովը տակ ու վիրև արեց, գյամին տարավ տվեց մի քարի, հաղար կտոր արեց: Էդ իրեք մարդը մնացին մի տախտակի վրա, ասին.

— Աստվա՛ծ, վիշապից պրծանք, ընկանք էս նեղ տեղ, տենանք, որտե լուս կընկնենք:

Ծովի յափին տարավ, մի ղրաղ դուս հանեց:

Բերեցին էդ տախտակը մի քարից կապեցին. իրանք դուս էկան շուր, տեհան մեշա ա, սկսեցին մեշի մեջը ման գալը:

Տեհան ոչխարի բոռոց ա գալի, ասեցին.

— Տղե՛ք, էթանք էս ոչխարի իզին, մե շենլըք գցենք մեղ:

Հասան ոչխարին, տեհան շոպանը թեփեգյոզ ա, ոչխարի կըջալին կաղնեկ ա. հենց որ տեհավ, գերանը դագանակի պես դրել էր ուսին, խառնեց ոչխարին, քշեց, տարավ իրան ղաղեն: Ջադի առաջ մի շաղացքի քար կար, պըտըտեց դեն, ոչխարը արեց նեքսև, մեզ էլ հետը: Գնաց մի սելաչափ ցախ բերեց, շորս քար շինել էր թունդիր, ցախը վառեց էդտի, մի շանփուր ունեք, դրեց էդ կրակի մեջ, լավ տաքացավ, հանեց ու բերեց, տվեց ըդրա դոշը, հենց ճվաց ու մեռավ: Տարավ, կախ տվեց թունդիր՝ էփեց. քարի վրա ճըղճըղեց ու կերավ:

Ասեցին.— Էգուց էլ մեղ կուտի, ինչ իլաճ անենք, սրա ձեռիցը պրծնինք:

Լիսը բացվեց, խառնեց ոչխարի հետ, տարեց մեշի մեջը. չար իրիկուն պըտըտեց, իրիկուն էլի բերեց, արեց ըտեղ. էլի ցախ վառեց, շանփուրը բերեց. էլի տվեց էն մեկ ընկորը դոշիցը, էլավ, տա-

րաւի թունդիրը, էփեց, ճղճղեց ու կերավ: Մնաց մինակ. միտք արավ. «Վաղն էլ նոպաթն իմն ա»: Էդ մտքին էր, տեսավ թեփեգյողը քնեց. խոտց քցեց, քունը տարավ: Տղեն վե կացավ, էդ շանփուրը վե կալավ, դրեց աչքի մեշ, հուսի տվեց՝ դնաց գետինը: Վե կացավ, ընկավ պատեպատ, էդ տղին ման ա դալի: Ճարը կտրավ՝ շաղացքի քարը դենը քցեց, շեք արեց ծակի դեմը, ոչխարը մի մի շեքի տակով անցկացրեց: Տղեն մտավ սեյիսի փորի տակ. սեյիսը յավաշ-յավաշ դնաց, շեքի տակով անց կացավ. էդ էլ հետը գնաց:

Տղեն դուս էկավ դուռը, բոռաց, ասեց.

— Հո քու ձեռից պրծա: Էդ ձենը որ լսեց, էդ թեփեգյոզն էլավ մի քարի գլուխ բոռաց, որ բոռաց, էնդտա՛ր թեփեգյոզ էկան, լըցվան ըտեղ: Էդ տղեն փախավ:

Էդ թեփեգյոզներ ասեցին.— Խի՛ ես բոռում:

— Էդ փախնողը իմ աչքը հանեց,— ասեց:

Ըդոնք ընկան ըդրա քամակը: Էդ փախավ, դնաց, էն տախտակը, որ կապել էր, վրան նիլավ, կապը ետ արեց, քշեց ծովի մեշը. ըդոնք էլ էկան, ղրաղը կանդնան, էլ չկարացին մտնել: Էդ տղեն տախտակը քշեց, յավաշ-յավաշ դնաց ծովի մեշը. գնաց, մի ղրաղ դուս էկավ շուր. տեհավ մեշա ա, ամեն տեսակ պտուղն էլ կա, մարդ ու մատադ չկա: Էդտեղ մի աղբուր կար. իրեք աղոնիկ էկան ըտե՛ւ խրխեք հանեցին, մին-մին ախիկ էլան, լեղացան:

Տղեն մեկի խրխեն գողացավ, տարավ պահեց: Էկավ, էդ ախիկներուն մոտացավ. ըդոնք տեհան մարդ ա դալի, էն էրկուսը էկան ալպեալը խրխեքը հագան ու թուան. տղեն դնաց, էն մեկը բռնեց:

Էդ տղին աղաչեց, ասեց.— Տղա՛, ես քու թայը շեմ:— Ինչդար աղաչեց, չէլավ:

Էդ տղեն էդ ախիկան առավ, էլան մարդ ու կնիկ:

Ասեց.— Մարդ ու կնիկ ենք, իմ խրխեն տու հագնեմ:

Ասեց.— Վախում եմ, դու կփախնես:

Ժամանակ մի մնաց, մի տղա բերեց, ասեց.

— Հմի տո՛ւր, տղա եմ բերել, էլ շեմ փախնի:— Էլի չտվեց:

Մի տղա էլ բերեց, էղավ էրկու տղա.

— Դե՛, — ասեց, — իմ խրխեն տուր, էրկու տղա եմ բերե, շեմ փախնի:

Գնաց, խրխեն հանեց, բերեց, տվեց:

— Դե՛, ա՛ն,— ասեց:
Հենց որ խրխեն հագավ, էրկու տղեն խըտըտեց, գնաց ծովի մեջտեղ կաղնեց, ասեց.

— Ա՛յ տղա, էս էրկու տղեն ընձի հալալ արա:

Ասեց.— Հալալ չեմ անի:

Իրեք անգամ ըգենց ասեց, էն էլ չարեց:

էրկու տղեն առեց, սըկվեց ծովի տակը, էլ չէրևաց:

էդ տղեն էլի մնաց ըգտեղ, ասեց.

— Մինակ ի՞նչ անեմ:

Գնաց, ընկավ ման գալու: Գնաց, տեհավ մի մարդ, հրես, նստած ա, բարև տվեց, ասեց.

— Ի՞նչ մարդ ես, ըստե նստած ես:

— Մեր տուն ըստե ա, գեղն ըստի մոտ ա: Դե՛, արի՛, ձեռիցս բռնա, էթանք մեր տուն:

Դու մի ասի, էդ մարդ՝ Պալտր-ղայիշ էր, փաթաթվավ ըդրան. նիլավ շալակ, փետ առավ ..սո, քշեց. տարավ իրանց տունը:

Գնաց տուն, ըդրա հերն ասեց.

— էդ ի՞նչ բան ա:

Ընձի ճանփին պատահեց, նիլա էկա:

Նոպաթե նոպաթ ըդրան նիլան: Ցախ են բերըմ, ջուր են բերըմ՝ էրկու ամիս ըգենց բանացընըմ ին: Ըդոնց ձեռիցը իլաճ չէր գտնըմ պրծնեք, շատ շարշարեցին: Մեկը փշի կէթար, մեկը՝ ջրի:

Մեկ օր գնաց ծովի դրաղը, ըտիան մի մարդ էկավ, ասեց.

— Ըդոնց ձեռը դու խի՞ ես ընկե:

Ասեց.— Ճանփեն կորցըրեցի, էկա ընկա:

— Որ մտնես ծովը, ըդոնք քամակեդ չգան, կպրծնես:

էդ տղեն ջրի միջով, դբաղեն գնաց. ընոնք կանչեցին.— Արի՛, արի՛:

էն ականջ շարեց. նիլող հետ դառավ, գնաց:

Տղեն մեկ քարի տակ տափ կացավ. տեհավ մի գյամի, գյամը-չուն ձեն տվեց.

— Արի՛, ընձի էլ տար:

Գյամըչին վե կալավ, դրեց գյամու մեջը, տարավ հանեց քաղաքի մեջ: էդտեղ տղեն իրեք տարի մնաց, աջխատեցավ բավակա-նի փող:

էդ քաղաքիցը մի ախչիկ առավ: Մի շորս տարի մնաց կշտին,

էդ ախիկը մեռաւ: Բերեցին, տավար, ոչխար ինչ որ ունեւր, մորթեցին:

Ասեց.— Ախպե՛ր, խի՞ եք մորթում, ընծի տուն ա պետք, ես էլի կնիկ պրտի առնեմ:

Ասեցին.— Խի՞, դու էս քաղաքի սովսրութունիցը խարար շիս:

Ասեց.— Ի՞նչ կա, որ խարար ըլլեմ:

Ասեց.— Մարդը մեռնի, կնիկը պրտի թաղենք, կնիկը մեռնի, մարդը պրտի թաղենք հետը. կնիկը ի՞նչ կանես, մալը ի՞նչ կանես:

Բերեցին մի ղուպուր կնկա համար շինեցին, մի ղուպուր տղի համար. տարան դերեղմանատուն: Ըզոնց դերեղմանատունը շատ մեծ դաղա էր, պարանով կախ տվին ծակովը: Էրկու մարդ էլ իրանցից կախ տվին, վեր էկան, տեղավորեցին. էն մարդկանց էլի քաշեցին վիրև:

էդ տղեն ասեց.— Սա մեռած շեմ, դուս գամ, տենամ ինչ կա:

Դուս էկավ, ման էկավ, տեհավ որ ղուպուր ղուպուրի վրա լիքն ա, մե կնիկ էլ էնտեղ սաղ ա. վնաց, էդ կնկան հարցրեց.

— Դու ե՛տի ես էկե ըստե:

Ասեց.— էս քաղաքի ատաթը կտրվի, էրեկ իմ էրիկ մեռավ, ընծի էլ բերին ըստե. սըտի ընդար մնամ ըստե սոված, ըստե մեռնեմ:

Ասեց.— Իմ կնիկն էլ ա մեռե, ընծի էլ բերեցին ըստե: Աստված պրտի լուս անի, ըստիան ուրսի պրծնենք, թե ըստե պրտի մեռնենք:

Կնիկն ասեց.— Ըստե գալող էլ չպրծնի:

Թամաշա արին, տեհան մի հատ Աղվես էկավ, ըտե ման ա գալի: Տղեն ասեց.— էս Աղվես տեղ կունենա, էկել ա. տենանք, դրվորն ա էթում, մենք էլ էթանք:

Տղեն ընկավ քամակը, կնկան էլ աշեց.

— Դուն էլ արի՛:

Աղվես դնաց, ըզոնք գնացին. գնացին, մի ծակից գուս էկան ծովի դրաղը: Աղվեսը թռավ, գնաց. տղեն տեսավ գյամի ա գալի, գյամը լուն կանչեց: Գյամը լին վե կալավ ըզոնց:

էդ կնիկ շատ սիրուն էր, գյամը լու աշք ընկավ էդ կնկան. միտք արավ, որ տղին վե կալի, քցի ծով, կնիկն առնի:

Մեկ էլ տեհավ ծովից ձեն էկավ.

— էդ ինչ ես անըմ, հե՛յ:

Գյամըչին որ ձենը լսեց, փախավ, տափավ:
Իրեք անգամ միտքը փոխեց, իրեք անգամ ծովի միջից ձեն
տվին, էլ չկարացավ տաներ, հանեց շուր:

էդ տղեն, էդ կնիկը նստան ծովի ղրաղը: Էն աղունիկ կնիկը
էրկու էրեխեն առավ, էկավ ըտե, կանչեց ծովի միջից, ձեն տվեց.

— Ա՛յ մարդ, կնիկ ես առե, էդ կնիկը հալալ, էս էրեխեքը ընձի
հալալ անը՞մ ես:

Ասեց.— Հալալ չե՞մ անի:

Ասեց.— Խի՞ չես անի, Պալտր-ղայիշից քե աղատեցի՝ էն ո՞վ
էր, էն Աղվեսը քե ազատեց՝ էն ո՞վ էր, իրեք անգամ գյամըչին
միտքը փոխեց, քե պըտի քցեր ծովը, էն ով էր ձեն տվեց. իրեք
փորձանքից քե ազատեցի, էս էրկու էրեխեն ընձի հալալ չես անը՞մ:

Ասեց.— Հալա՛լ ա քեղ:

Ասեց.— Էթա՛ք բարին,— ու սրկվեց ջրի տակ:

Մարդ ու կնիկ վե կացան, էկան էդ քաղաք: Մի հարուստ մարդ
ըղրան պատահեց, ասեց.

— Դու ի՞նչ մարդ ես:

Ասեց.— Ղարիս: մարդ եմ, ես էլ չեմ գիտում, ես ու իմ կնիկ
էկե, ընկել ենք ըստիան:

Ասեց.— Որտի՞ պըտի մնաս:

— Տեղ չունինք ըսկի, աղա՛, — ասեց:

Վե կալավ, տարավ իրա տունը, հաց կերան, պրծան: Առավո-
տը հարցրեց.

— Նոքար կըլլիս:

Ասեց.— Չէ՛:

Ասեց.— Բռնեմ քե նոքար, թվանք քցել սարվի:

Ամիսը տասը մանեթ բարըշեց, ինքն էլ մուֆթա պահի: Բա-
րութ գյուլլա առավ, տվեց ըղրան, ասեց.

— Լավ նշան քցել սարվի:

Մեկ օր ասեց.— Արի՛, փորձեմ, խանչալը կըղնեմ, գյուլլով
բերնին տուր:

Գյուլլին տվեց, էլավ էրկու կտոր. կշոեց, մեկը քիչ ծանտր էր,
ասեց.— Լավ չես սարվի:

Գնաց մի ամիս պտըտեց, էկավ: Խանչալը տնկեց,— գյուլլով
տվեց բերնին. բերեց, կշոեց՝ էրկուան էլ դուղ-դուղա էկան:

Բերեց, մատնիք դրեց բռան մեջը, գյուլլով տվեց, մատնիքի
ծակեն անցկացրեց:

Ասեց.— Աֆարը՛մ, տղաւ— Գնաց, տղի ճակատը պաշեց:
Վե կալավ տղին, գնացին իրանց տունը. հաց կերան, գինի
խմին, լավ քեֆ արին, մի դաստա փետ վե կալան, թվանքը վե կա-
լան, ասեց.

— Տղա՛, վե կալ էթանք ծովի դրաղը:

Ծովի դրաղը փորեցին, էդ փետերը քցեցին, ծածկեցին:

Աղեն ասեց.— Մտի ըստե, չքնե՛ս. հենց գջերը մե ջանավար
կգա ծովիցը, հենց պոզերը, մռութը դուս կգա ծովիցը՝ ալպեալը
դու մի թողի գուս գա:

Գջերվա կիսին տեհավ՝ մի զատ դուս էկավ ծովիցը, կրակի պես
պլպլում ա, գալիս ա դպա իրան, էկավ, մոտանում էր, մեկ կուլի
մանկզիլ մնաց. տղեն նշանը բռնեց, տալու բաշտան ճակտին բռ-
նեց: էդ ջանավարը շոնց պոչի վրեն ու շարտեց ըզրան, որ դիպավ
տղի էրեսին, էրես էլավ արնվիկ, ուշքը գնաց, նվաղեց:

Աղեն թվանքի ձենը լսեց, կնկան ասեց.

— էթում եմ, կնի՛կ, ինչքան մարդ փշացավ, էդ էլ փշացած
կըլի:

Գնաց, տեհավ ջանավարը վեր ա ընկե ծովի դրաղը, գնաց քո-
լիկը՝ տեհավ տղեն սաղ էր, արնի մեջ կորել ա:

Ջուր բերեց, գլխին քսեց. տղեն օյանմիջ էլավ, աչքերը բացեց,
տեհավ՝ աղեն գլխու վերեն ա:

Ասեց.— Տղա՛, մի վախենա, վե՛ր, էթանք:

Ջանավարը դրին մեշոքի մեջ. տղեն շլակեց, էկավ դպա տուն,
բերեց, դրեց կրճրճի մեջ, բերանը խմորեց, գրեց թունդիրը, լավ
էփեց, հանեց՝ եղը թոփ էլավ կարագի պես մի գունդ:

Ասեց.— Կնի՛կ, մի կտոր բանբակ բեր:

Բանբակ բերեց. կճուճը թամուզ սրբեց, մի պուճուր էլ էդ եղի-
ցը դրեց մեջը, տրորեց ու տվեց տղին, ասեց.

— Դե, գնա, թե մարդ ես, էս էլ քե բու ա:

էգ տղեն վե կալավ, գրեց ծոցը, ասեց.

— Ընձի ճանփու գիր:

Աղեն գնաց էրկու հատ ձի առավ, էրկու հարիր մանեթ փող
տվեց, լավ շորեր տվեց.

— Դե՛, — ասեց, բարի ճանփա:

Ըզոնք ընկան ճանապար ու գնացին. գնացին շուրի մեջ մեկ
աղբրի վրա իջան: Հաց կերան, պառկան: Տեհան մի տաս հատ
ձիավոր գող էկան, վեր էկան, ասեցին.

— Էս մարդին սպանենք, ձիանը, կնիկը տանենք:

Էդ մարդը ընկավ աղաչանք.

— Խի՞ եք սպանում, ձին էլ տարեք, մալն էլ տարեք, ընձի, իմ կնկան ձեռ մի տաք:

Գողերի մեկի սիրտը խիղճ ընկավ.

— Խի սպանենք, մեր ձեռ ինչ կընկնի, որ սպանենք, կնիկը տանենք՝ ի՞նչ անենք:

Ձիանն էլ առան, փողերն էլ առան, էրկսով շրփլախ մնացին ըտե: Մոցի շիպի բանրակը թափած էր ըտե, ասեց.— Կնի՛կ, կնի՛կ, էդ պոնժով ՚մե ջուր տուր, խմեմ:— Կնիկը պոնժը վե կալավ, աղբրի մեջը լվաց:

Ասեց.— Էդ բանրակով էլ սրբի, թամուզ ըլլի:

Բանրակը վե կալավ, սրբեց. տեհավ պոնժը էլավ ոսկի:

Ասեց.— Կնի՛կ, էս բանրակին հունար կա, բանրակը թոփ արա:

Բանրակը թոփ արին, վե կացան ու գնացին: Որտե որ սովածանում են, մի խեցատի կտոր վեր են քաշում, բանրակով սրբում, ըլլում էր ոսկի, տալիս են հացի, ուտելով էթում են:

Էկան իրանց քաղաքը դուս էլան, գնացին իրանց տունը:

Հերը, մերը էկան, թոփ էլան գլխին, ասեցին.

— Էդ ի՞նչ բան էր, ըդենց սիպտակեցիր:

Նստեց, իրա գլխին էկածը նաղը արեց, ասեց.

— Էսդար դարտ տենողը չի՞ սիպտակի:

Ղոնախ էկավ տունը, տեսավ էն թուխ մարդը նստավ հացի, էն սիպտակ մարդին բանացընում էր, ասեց.

— Խի՞ եք շահելներդ նստե, էդ սիպտակ մարդին բանացընում եք:

Ասեցին.— Էդի մեր պատիկն ա:

— Ո՞նց պատիկն ա, ես ձեր հացը չեմ ուտում, թո իրա պատմությունը անի:

— Դու քու հացը կեր,— ասեց,— իմ դարտը շատ ա:

— Դու քու դարտը շասես, ես ձեր հացը չեմ ուտի, ասեց:

Էդ մարդ սեղանի վրա սկսեց իրա գլխից անցած բաները, պատմեց մինչև իրեք օր:

Ղոնախը մինչև տակը շառավ, հաց չկերավ: